

Ա. ԵՐՐՈՐԴ. ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ  
ԹՈՐՈՆԹՈ - ԳԱՆԱՏԱ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ  
ՓԵՏՈՒ. 25, 1979

ԱՏԵԽԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ԵՐՐՈՐԴ. ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԼՈՅ ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎը  
ՄԵԴԻ ՈւՆԵցաւ ԿԻՐԱԿԻ ՓԵՄՐՈՒԹՅՈՒՆ 25 1979-ին ժամը 3:30-ին ԵԿԵՂԵՑԼՈՅ  
ՆԵՐՔՆԱՍՐԱԿԻՆ ՄԵՇ:

ԱՆԴԱՄԱՆԵՐՈՒՆ ԹԻՒՆ ԷՐ 116:

ԺՐԱԳԻԲ ԿԱՆՈՆԱԳՐԻ 17-ՐԴ ՅՈՂՈՒԱԾԻ հԱՄԱՁԱՅՆ ԺՈՂՈՎԸ ՕՐԻՆԱԼՈՐ հԱՄԱՐ-  
ՈՒԵԼ Է ՎԵՐՃ՝ ծխական ԽՈՐԴՈՒՐԴԻ ԱՄԵՆԱՊԵՏ ՊՐՆ. ՊԱՐԳԵԼ ԽՈՄԱՆԵԱՆ ՆԵՐԱ-  
ԼԻՐԵԳ ԱՌԱՋՆՈՐԴՊԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՈՒ ԾՈՒԽԻՍ ՀՈՎԵԼՈՐ ՀՈՎԻ ՀՈՎՃ. Տ.  
ՎԱԶԳԵՆ Ծ. ՎՐԴ. ՔԵՇԻՉԵԱՆԸ որ աղօթքով բացումը կատարէ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈ-  
ՂՈՎԻՆ:

ՀԱՅՐ ՍՊՈՐԹԻՆ աղօթքէն ետք ՊՐՆ. ՊԱՐԳԵԼ ԽՈՄԱՆԵԱՆ ՆՐԱԼԻՐԵԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ հԱՄԱՐ-  
ՑԱՆՑՆԱԽՈՒՄՔԻ ԱՄԵՆԱՊԵՏ ՊՐՆ. ՀԱՅԿ ՍԵԼԵԱՆԸ որպէսզի օՐՈՒԱՆ դիւանին  
ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱԳՆԵ:

ՊՐՆ. ՀԱՅԿ ՍԵԼԵԱՆ յանձնախումքին կողմէ յայտնեց թէ ժողովին ատենապե-  
տութեան համար կը յանձնարարէ ՊՐՆ. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԸ իսկ ատենապետ-  
թեան համար թեկնածուներն են.՝ ՊՐՆ. ԹՈՐԳՈՄ ԶԱՊՈՒՆԵԱՆ ԵԼ ՄՈՒշեղ  
ՇԱՀՆԱՊԱՐ: Նկատի ունենալով որ ՊՐՆ. ՄՈՒշեղ ՇԱՀՆԱՊԱՐ ներկայ չէր,  
առաջարկուեցաւ որ երկրորդ ատենապիրը ըլլար ՊՐՆ. ԺԻՐԱՅՐ ԵՐԵցեան:  
Դիւանի բոլոր թեկնածուները ԸՆԴՈՒՆԵԼ ետք իրենց պարտականութիւնները  
ԵԼ ՈՒՐԻՇ թեկնածուներ չըլլալով, առաջարկուեցաւ ԵԼ ապա ԸՆԴՈՒՆՈՒԵցան.՝

ՊՐՆ. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ:

ՊՐՆ. ԹՈՐԳՈՄ ԶԱՊՈՒՆԵԱՆ:

ՊՐՆ. ԺԻՐԱՅՐ ԵՐԵցեան

ԱՄԵՆԱՊԵՏ

ԱՄԵՆԱՊԻՐ

ԱՄԵՆԱՊԻՐ

ՑԱՆՈՒՆ ՕՐՈՒԱՆ դիւանին ՊՐՆ. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ ՀՆՈՐԴԱԿԱԼՈՒԹԻՒՆ յայտ-  
նեց ներկայ անդամներուն իրեն հանդէպ ցոյց տրուած վստահութիւնները:

ԾԽԱԿԱՆ ԽՈՐԴՈՒՐԴԻ կողմէ պատրաստուած օրակարգը վաւերացուելէ ետք  
ԱՄԵՆԱՊԵՏ ՊՐՆ. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ ՆՐԱԼԻՐԵԳ ՊՐՆ. ՄԱՏԱԹ Բ. ՄԱՄՈՒՐԵԱՆԸ  
ՈՐ ԿԱՐԴԱՅ անցեալ տարուան անդամական ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎի ատենագրութիւնը:

ՍՈՒՅ ԱԹԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐԳՈՒՄՔՆ ետք անդամները դիտել տուին թէ բազմաթիւ  
զանցառումներ եղած էին. ատենագրութեան մէջ իսկ ուրիշ կէտեր պէտք ունէին  
սրբագրութիւններու: Տեղւոյն վրայ եղան հետեւեալ սրբագրութիւնները ԵԼ  
փոփխութիւնները:

1.- Յօդուած Յ.- Փոխանակ Տիար Վարդան Վարդանեանի՝ Թագւոր Յորեան:

2.- Յօդուած 6.-առաջին համարի մէջ փոխանակ Տիար Գեղամ Մարգարեան՝ Տիար Արմենակ Մարգարեան:

3.- Յօդուած 12.- ՆՈՐ ՀԱՐՑԵՐ. առաջին համարին մէջ՝ փոխանակ ՊՐՆ. ԳԵՂԱՄ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԵՑ՝ ՊՐՆ. ԳԵՂԱՄ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԹԵԼԱՊՐԵՑ, Եւ յետ կարծիք-ՆԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԹԵԼԱՊՐԱՆՔԸ Առաջարկի ՓՈԽՈՒԵցաւ ապա ՃԵՆԱՄԲԱՐԸ ՔՈՒԵԿԱՐԿՈՒԹԵԱՆՔ ԸՆԴՈՒՆՈՒԵցաւ:

Առենագրութեան արժանագրութենէն մոոցուած Էր հետեւեալը.-

Հայկ ՍԵԼԵԱՆ ԽՈՍՔ առնելով ըսաւ թէ ատենագրութեան մէջ ՏԵՇԱՋԱՆԻ գրքոյկին մասին շատ երկար գրուած է բայց իմ խոսքերս որ կարեւոր նիւթի մը մասին է չէ յիշուած, եւ դիւանէս խնդրեց որ 1977 ատենագրութեան մէջ աւելցուի ՏԵՇԵԼԵԱԼՆԵՐԸ.-

Արիս Սրբազնը զաղութին մէջ սկսած է երկրորդ եկեղեցւոյ մը աշխատանք-ՆԵՐՈՒՆ: ԵՄ անծամք սկզբունքով հակառակ չեմ երկրորդ եկեղեցիի մը կազմութեան բայց աշխատանքի կերպը սխալ է մասնաւորապէս քանի մը շաբաթէ ծխական ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ պիտի ըլլար, ինչո՞ւ համար ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎին չէ սպասուած:

5.- Յօդուած 5.- առաջին համարին մէջ ՊՐՆ. Վարդան Վարդանեանի հարցումը կը սրբագրուի եւ կ'աւելցուի հետեւեալ ճեւով.-

Վարդան Վարդանեան Արիս Սրբազնին ուղղեց իր հարցումը ըսելով թէ՝ ինչ իրաւունքով ինք Օթավա գացած էր, կրօնական ծիսակասարութիւններ կատարելու:

Արիս Սրբազն: ըսաւ թէ այս ծրագիր կանոնագրի տրամադրութեան մէջ ինծի իրաւասութիւն: արուած է այդ շոշանի մէջ ծիսակատարութիւն կատարել: -Նոր ԹԵՄԻ կանոնագրին է ակնարկութիւնը - անվավեր:-

Օրուայ Ատենապետ ՊՐՆ. Կարօ Գավուքեան դարձեալ խոսք տուաւ ՊՐՆ. Վարդան Վարդանեանին որը շարունակելով ըսաւ թէ՝ Առաջնորդ Սրբազն Հայրը, գրաւոր կերպով ճեզի հրահանգած է որպէսզի Թորոնթօ եւ Համիլթոնէն դուրս, ծիսակատարութիւն չկատարէք եւ թէ Օթավան կիյայ: - ըստ Առաջնորդ Սրբազն հօր նամակին - Մոնթրէալի ծուխին մտահոգութեան եւ իրաւասութեան սահմանին մէջ: Մենք պէտք է որ գիտնանք մեզի տրուած հրահանգներուն ենթարկուիլ անհաճոյ վիճակներ չստեղծելու համար:

Այս փոկոխութիւններէն ետք ատենագրութիւնը վաւերացուեցաւ յետ ՃԵՆԱՄԲԱՐԸ քուէարկութեան:

### Տեղեկագիրներ.-

1- ծխական Խորհուրդ:- ծխական Խորհուրդի ատենադպիր Պրն. Հրաշ Շիշմանեան անգլերէնէ թարգմանելով հայերէն լեզուով ներկայացուց ծխական Խորհուրդի տարեկան գործունէութեան տեղեկագրութիւնը: Ապա եղան հետեւեալ հարցում-ները ու լուսաբանութիւնները.-

Պրն. Մինաս Սէլեան. յիշեցուց թէ տարուան ընթացքին ծխական Խորհուրդէն հրաժարած երեք վարչականներուն հրաժարականներուն գրաւոր հրաժարական-ներ ըլլալուն մասին բան մը չէր յիշուած. ապա աւելցուեցաւ ԳՐԱՆԻՌ բառը:

Պրն. Գրիգոր Էլմասեան թելաղրեց որ յառաջիկայ տարի անցեալին պէս նորէն կատարուեի եկեղեցւոյ կտակարարներու հոգեհանգստեան պաշտօնը:

Պրն. Հրանդ Սուրին հարց տուաւ թէ Գերշ. Արիս Եպիսկ. Շիրվանեան հակառակ մեր եկեղեցիէն հրաժարելով, ի՞նչպէս կընայ մեր զաղութէն ներս եկեղեցական արարողութիւններ կատարել: Հոգջ. Հայր Սուրբը պատասխանելով ըսաւ թէ Գերշ. Արիս Եպիսկոպոսը պաշտօնական հանգամանք չունի մեր զաղութէն ներս եւ ոչ ալ մասնաւոր արտօնութիւն ունի Առաջնորդ Հօրմէն կամ Վեհափառ Հայրապետէն մինչեւ այս օրս Գերշ. Արիս Եպիսկ. Եկեղեցական արարողութիւն կընայ կատարել միայն Առաջնորդ Թորգոմ Արքապիսկոպոսի գրաւոր մասնաւոր արտօնութեամբ:

Ապա Պրն. Ժիրայր Երէցեան ներկայացուց հետեւեալ բանաձեւը.-  
Անդամական Ընդհանուր ժողովս լսելէ ետք ծխական Խորհուրդի միամեայ գործունէութեան տեղեկագրութիւնը, զնահատանքով՝ կ'ընդունի զայն եւ կը վաւերացնէ զայն:

Այս բանաձեւով ծխական Խորհուրդի տեղեկագրութիւնը ձեռնբարց քուէարկութեամբ վաւերացուեցաւ:

2- Թեմական Պատգամաւորներու Տեղեկագիր:- Ատենապետ Պրն. Վարդանեան կարդաց Թեմական Պատգամաւորներու տեղեկագիրը որմէ ետք Պրն. Ժիրայր Հանրմեան: Հարց տուաւ թէ տեղեկագրութեան թիւ 4 յօդուածին մասին պատգամաւորները ի՞նչ բացատրութիւն ունին: Պրն. Հայկ Սէլեան այս հարցին պատասխանելով ըսաւ թէ, Թեմական ժողովին որոշումէն կախեալ է Գանատայի մէջ զատ Թեմի մը կազմութիւնը:

Թեմական Պատգամաւորներու տեղեկագիրը վաւերացուեցաւ ձեռնբարց քուէարկութեամբ:

3- Հաշուէքնիչ Յանձնախումբի Տեղեկագիր:- Պրն. Լեւոն Եազրծեան ներկայացուց այս տեղեկագիրը ուր կը հաստատուէր թէ Եկեղեցւոյս հաշիւները օրինական վիճակի մէջ էին: Պրն. Յովհաննէս Գույումծեան թելաղրեց որ Եկեղեցւոյ Ելեւմուտքի հաշիւները հրապարակուէին տարին երեք անգամ բայց ծխականի Ատենապետ Պրն. Պարգեւ Խոնածեան այդ թելաղրանքը գործնական չգտաւ: Այս տեղեկագիրը վաւերացուեցաւ ձեռնբարց քուէարկութեամբ:

- 4- ծխական Խորհուրդի Գանձապահին Տեղեկագիրը:- Պրն. Հէրի Արթինեան Ներկայացուց այս տեղեկագիրը որմէ ետք Պրն. Յ. Գույումծեան թելաղրեց որ Տարեց Քաղաքացիներու մօտ 3000 Տուարի հաշիւը փակուի յառաջիկայ տեղեկագրութեան մէջ երեւակով որպէս ծխական Խորհուրդի ծախս: Այս տեղեկագրութիւնն ալ վաւերացուեցաւ ծեռնբարց քուէարկութեամբ:
- 5- Տիկնանց Միութեան Տեղեկագիրը:- Այս տեղեկագիրը վաւերացուեցաւ այնպէս ինչպէս որ Ներկայացուած էր:
- 6- Ս. Սահակ Ս. Մեսրոպ Ազգ. Վարժարանի Տեղեկագրութիւնը:- Այս տեղեկագիրը վաւերացուեցաւ հետեւեալ փոփոխութենէ ետք:- Մայիս 5 1978-ի քայլարշաւը կազմակերպուած էր Վարդանանց Ասպետներու կողմէ:
- 7- Կիրակօրեայ Վարժարանի տեղեկագիրը:- Այս տեղեկագիրն ալ վաւերացուեցաւ այնպէս ինչպէս որ Ներկայացուած էր ժողովին:
- 8- ՀԵԵԿԱ-ի Տեղեկագիրը:- Այս տեղեկագրի առնջութեամբ եղան հետեւեալ թելաղրութիւնները:-  
Պրն. Գրիգոր Զմրուլիտեան թելաղրեց որ եկեղեցւոյ անդամները իրենց զաւակներն ՀԵԵԿԱ-ի շարքերէն ներս:
- Տիկին Լենա Պէյլէրեան թելաղրեց որ ՀԵԵԿԱ-ն իր աջակցութիւնը քերէ երէց Դպրաց Դասին:
- Պրն. Մինաս Սէլեան Բելաղրեց որ մենք երէցներս թիկունք կանգնինք ՀԵԵԿԱ-ին:  
Այս տեղեկագիրն ալ վաւերացուեցաւ:
- 9- Տարեց Քաղաքացիներու Տեղեկագիր:
- 10- Դպրաց Դասի Տեղեկագիր
- 11- Ս. Խաչ Օժանդակ Մարմնի Տեղեկագիր
- 12- Նոր Մերունդի Տեղեկագիր:
- Վերոյիշեալ տեղեկագիրները ծեռնքարծ քուէարկութեամբ վաւերացուեցան այնպէս ինչպէս որ Ներկայացուած էր:

- ԵԼԵՒՄՏԱԿԱՆ ՀԱՇԻՆԵՐ:- Հետեւեալ յարակից մարմիններու ԵԼԵՒՄՏԱԿԱՆ տեղեկագիրները վաւերացուեցան այնպէս ինչպէս որ Ներկայացուած էին:-
- 1- Տիկնանց Միութիւն  
2- Ս. Սահակ Ս. Մեսրոպ Ազգ. Վարժարան  
3- Դպրաց Դաս  
4- Կիրակօրեայ Վարժարան  
5- Գրադարան  
6- Երէց ՀԵԵԿԱ  
7- Կրտսեր ՀԵԵԿԱ  
8- Տարեց Քաղաքացիներ

Ընտրողական Յանձնախումբի Տեղեկագիրը:- Պրն. Հայկ Սէլեան Ներկայացուց այս տեղեկագիրը ընտրողական յանձնախումբին անունով: Այս տարուան թեկնածուներն են.-

ԺԼԱԿԱՆ ԽՈՐՅՈՒՐԴ

1- Պրն. Յակոբ Երէցեան	102	Քուէ
2- Պրն. Հէրի Արթինեան	102	,,
3- Պրն. Վահէ Մինսէթեան:	105	,,
4- Պրն. Ստեփան Սէմէրծեան	108	,,
5- Պրն. Սարգիս Զիլինկիրեան	112	,,

ԸՆԹՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՃՆԱԽՈՒՄԸ

1- Պրն. Ալեքսան Պալթայեան	105	Քուէ
2- Պրն. Եղուարդ Տէօվլէթեան:	108	,,
3- Պրն. Հայկ Սէլեան	110	,,
4- Պրն. Մինաս Սէլեան:	110	,,
5- Պրն. Թորգոմ Զապունեան:	110	,,

ՀԱՇՈՒԵԲՆՆԻՀ ՅԱՆՃՆԱԽՈՒՄԸ

1- Պրն. Գրիգոր Էլմասեան	110	Քուէ
2- Պրն. Յդվաննէս Գույումճեան	112	,,
3- Պրն. Լեւոն Եազընեան	115	,,

## Նոր Հարգելը

1- Պրն. Ժիրայր Երէցեան որպէս Եկեղեցւոյ տրատու մէկ անդամը ներկայացուց հետեւեալ առաջարկը.-

Թորոնթոյի Ս. Խերոր Հայց. Եկեղեցւոյ Փետրուար 25, 1979-ի տարեկան ընդհ. ժողովը, իր որդիական ջերմ զգացումներով կ'ուզէ տեղեակ պահել Ամենայն Հայոց Հայրապետ Տ.Տ. Կազգէն Ա. Կաթողիկոսը թէ Գերաշնորհ Արիս Եպիսկոպոս։ Եկեղեցւոյ բաժանարար աշխատանք կը տանի մեր ծուխէն ներս եւ այս առաջարկով ընդհանուր ժողովս կը փափաքի տեղեակ պահել մեր սիրելի Հայրապետը որ հարկ եղածը տնօրինէ։

Վերոյիշեալ առաջարկը երկրորդուելէ ետք, ատենապետ Պրն. Վ. Կարդանեան խօսք տուաւ անդամներուն որպէսզի իրենց Կարծիքները յայտնեն։

Պրն. Եղուարդ Տէօվլէթեան հարցուց թէ Գերշ. Արիս Եպիսկոպոս։ Եկեղեցւոյ նոր Եկեղեցի մը կամ ծուխ մը կազմել։

Հոգշ. Կազգէն ծ. Վրդ. Քէշիշեան պատասխանելով ըսաւ թէ Վեհափառ Հայրապետը մինչեւ այսօր իսկ որեւէ պատասխան չէ տուած որնւէ մէկուն եւ ան կը հաղորդակի ուղղակի Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին հետ։

Պրն. Ս. Օրջանեան յարմար գտաւ այս առաջարկին ուղղակի Կաթողիկոսին դրկուիւը։

Պրն. Ժիրայր Հանըմեան հակառակեցթ այս առաջարկին եւ ժողովին յիշեցուց թէ Ս. Խաչ Եկեղեցին արդէն երրորդ պատարագն է որ կը կատարէ եւ մենք այստեղ առաջարկներ պէտք չէ որ որդեգրենք որոնցմէ յառաջիկային պիտի ամշնայինք։

Պրն. Մարտիկ Փափազեան թելաղրեց որ այս առաջարկը ուղղարկուի միայն ու միայն Առաջնորդ Թորգոմ Մրբազանին եւ եթէ այս ծեւով որդեգրուի ինքը առաջինը պիտի ըլլայ ստորագրողը։

Հոգշ. Կազգէն ծ. Վարդապետ խօսք առնելով ըսաւ թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ օրէնքներ կան եւ մենք ըուլորս պարտաւոր ենք հնազանդելու եւ շարժելու այդ օրէնքներու համաձայն։ Դուք ծեր կամքը յայտնեցէք այսօր եւ ապա մեզի ձգեցէք որ ծեր որոշումները օրինական ծեւով փոխանձուին պէտք եղած տեղը։

Պրն. Թագւոր Յովիեան առաջարկը շատ մեղմ գտաւ իսկ Պրն. Հայկ Սէլեան ժողովին յիշեցուց թէ Թորոնթոյի մէջ նոր ծուխը օրինական վիճակ չունի։

Պրն. Սեղրակ Ատուրեան բարձր գնահատեց Հայր Սուրբին բռնած օրինապահ կեցուսածքը իսկ ծիսկան Խորհուրդի ատենապետ Պրն. Պարզեւ Խոնանեան կարեւոր նկատեց այս առաջարկին որդեգրումը ընդհանուր ժողովին կողմէ։

Ապա այս առաջարկը քուէի դրուեցաւ։

2 Եռնքարձ քուէարկութեան մասնակցեցան 95 անդամներ հետեւեալ արդիւնքով-  
83 քուէ Համաձայն առաջարկին։

4 քուէ առաջարկին դէմ

8 քուէ ծեռնպահ։

Պրնք. Մարտիկ Փափագեան եւ Ժիրայր Հանըմեան որոնք առաջարկին դէմ քուէ-արկեցին, ուզեցին որ իրենց անունները ըստ այնմ յիշուին:

Դիւանը ընդառաջելով Պրն. Եղուարդ Տէօվլէթեանի փափաքին իրեն խօսք տուաւ:

Ան իր խօսքը ժողովին ուղղելով յուզումով արտայայտուեցաւ գաղութին ներքին բաժանումներուն մասին եւ թախանձագին խնդրեց որ մենք քոլորս իրար ներենք եւ կրկին միանանք:

2- Պրն. Թագւոր Յովեան ներկայացուց հետեւեալ առաջարկը:

Ընդհանուր ժողովս լիազօրութիւն տայ ծխական Խորհուրդին որ ՀԲԸ-ի վարչութեան հետ համագործակցաբար, նոյն հողի կամ քով քովի երկու հողերու վրայ միասնաբար եւ անյապաղ մշակելու համար իր շինութեան ծրագիրը:

Եղան բազմաթիւ կարծիքներ: Ցստակ եղաւ թէ առաջարկը շինութեան ծրագիր մը մշակելու համար է միալն եւ թէ եկեղեցին պէտք է շինուի սեփական հողի վրայ ըստ ծրագիր կանոնագրի: Նոյնպէս Պրն. Պետրոս Զիլինկիրեան որ ՀԲԸ-ի թորոնթոյի ատենապետն է, թելաղրեց որ բանակցութիւնները ըլլան ատենապետական մակարդակի վրայ:

Առաջարկը ծեռնբարձ քուէներով վաւերացուեցաւ: Միայն մէկ անդամ հակառակ էր:

3- Պրն. Մանուկ Ամբակումեան քերաւ հետեւեալ առաջարկը:-

ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Ցանծնախումբի թիւ Յ0-րդ յօդուածը որ կը գբաղէր 1915-ի Հայկական ցեղասպանութեամբ եւ որ ջնջուած էր, հեռագրով մը ժողովին անունով ղրկուէր յանձնախումբի ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ռևսպան Սնթ Մոմնեանին որ այդ յօդուածը վերահաստատուէր:

Այս առաջարկը որդեգրուեցաւ միաժայնութեամբ:

4- Ծխական Խորհուրդի առաջարկը:- Պրն. Պարգև Խոճանեան ներկայացուց հետեւեալ առաջարկը:

Եկեղեցւոյս տրատու անդամներու տարեկան տուրքը ըլլայ Յ0 Տոլար իւրաքանչիւր անդամի եւ այր ու տիկին անդամ արծանագրուելու պարագային Միացեալ տուրքը ըլլայ Յ0 Տոլար: Վերոյիշեալ սակը ի օրու ըլլայ 1979-ի տարեշրջանէն սկսեալ: Եկեղեցւոյս նոր Սերունդ պամաթերթը առաքուի քոլոր անդամ ընտանիքներու առանց յաւելեալ վճառումի ըստ նախկին որոշումներու:





Այս առաջարկը վաւերացուեցաւ միաժայնութեամբ։ ծխականը պիտի որոշէ տարեց-ներու եւ 18-25 տարեկան անձերու սակը։

5- Պրն. Հայկ Մէլեան դիւանին ներկայացուց հետեւեալ հարցումը:- Մեր այն անդամները որոնք ներկայիս քաղաքիս մէջ գտնուող ուրիշ եկեղեցւոյ մէջ կը գործեն, ինչ է անոնց իրաւավիճակը մեր եկեղեցիէն ներս։

Այս հարցումին պատասխանեց հայր սուրբը։ Մեզի կը մնայ իրենց սխալները իրենց յայտնի ընել ըսաւ ան։ Ընդհանուր ժողովը իրաւունք ունի նախ ամբաստանելու եւ ապա վճիռ առնելու։ Պէտք է նոյնպէս ներել գիտնանք։

Վերջաւորութեան հայր սուրբը ժողովին տեղեկացուց Տարեց Քաղաքացիներու առենապետունի Տիկին Համամեծեանի քաղաքիս մէջ հայկական ծերանոց մը ունենալու գաղափարը։ Յարմար դատեց որ հիմակունիմա այս հարցով ծխական Խորհուրդը զբաղի։

Անդամական Ընդհանուր ժողովը փակուեցաւ երեկոյեան ժամը 10:10-ին Հայր Սուրբին շինիչ եւ բարեմաղթանքի պատգամով եւ աղօթքով։

Ատենապետ	Նախագահ	Ատենադպիրներ
 Վարդան Վարդանեան	 Հայկ Մահմադյան Թորգոմ Զապունեան	 Երվանդ Ղուկասյան Եւ Ժիրայր Երեցեան 
<p>Կազմէն ծ. Վրդ. Քէշիշեան Հոգեւոր Հովիւ Եւ Առաջնորդի Փոխանորդ Գանատայի</p>		